**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/9**

«03» 11 2022թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Վանի>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Ղ. Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 01.09.2022թ.N 1381-Ն որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքներ** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

**1.3 Աշխատանքի ողջ ծավալով կատարման ժամկետ է սահմանվում 270 օրացուցային օր:**

**Պայմանագրով նախատեսված աշխատանքի սկիզբը համարվում է կապալառուին օբյեկտը հանձնելու վերաբերյալ գրության հաջորդող աշխատանքային օրը՝ պայմանով, որ առկա են տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագրերը /համաձայնագրերը/ և շինարարության թույլտվությունը:**

**Աշխատանքի կատարման երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից պայմանագրի արդյունքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:**

**1.3.1 Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):**

**1.3.2 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում.**

**1.3.2.1 հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում՝ պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքմանը հաջորդող օրն ընկած ժամանակահատվածը,**

**1.3.2.2 շինարարական աշխատանքների կատարումն անհնարին դառնալու օրվանից մինչև դրանց վերսկսելու օրն ընկած ժամանակահատվածը, որն արձանագրվում է տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների առաջարկության հիման վրա՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված եզրակացությամբ:**

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ

սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի 5 Հավելվածում (Աղյուսակներ N 1 և N 2):

3.4.10 Շինարարական աշխատանքների կատարման ամբողջ ընթացքում շինարարական օբյեկտի տարածքը համալրի տեսախցիկներով, որոնք պետք է շուրջօրյա տեսանկարահանեն ամբողջ շինարարական հրապարակը՝ ընդգրկելով կառուցվող բոլոր տեսակի շինությունները **առնվազն արտաքին բոլոր կողմերից,** և այդ տեսախցիկներին հասանելիություն ապահովվի ինչպես պատվիրատուի, այնպես էլ պատվիրատուի նշած օգտատերերի համար: Սույն կետի խախտման դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գնի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն: Ընդ որում՝ վերջին վճարման կատարողականի գումարը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 787 532 542 (յոթ հարյուր ութսունյոթ միլիոն հինգ հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ, որից 131 255 424 (մեկ հարյուր երեսունմեկ միլիոն երկու հարյուր հիսունհինգ հազար չորս հարյուր քսանչորս) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5.4 Պայմանագրի գնից՝ մինչև 30%-ի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել Կապալառուի բանկային հաշվին որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում՝ հիմք ընդունելով աշխատանքների կատարման տվյալ տարվա համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում կատարվելիք աշխատանքների օրացուցային գրաֆիկով սահմանված ժամկետները: Կանխավճարը տրամադրվում է պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ֆինանսական միջոցների չափով: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

5.4.1 Կանխավճար կտարամադրվի և/կամ կատարողական ակտերը կընդունվեն միայն այն դեպքում, երբ առկա է տվյալ օբյեկտի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն մատուցող կազմակերպության գրավոր հավաստումն այն մասին, որ Կապալառուի կողմից իրականացված են շինարարության կազմակերպման նախագծով աշխատանքների մեկնարկման փուլում նախատեսված միջոցառումներն ամբողջությամբ:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Տույժի հաշվարկման հիմքում ընկած աշխատանքային օրերի մեջ չեն ներառվում կատարողական ակտում արտացոլված ժամանակահատվածի վերջին օրվանից մինչև կատարողական փաստաթղթերը Պատվիրատուին հանձնելու ամսաթիվն ընկած մինչև հինգ աշխատանքային օրը, որը տրվում է Կապալառուին՝ տվյալ փուլի աշխատանքներն ավարտելուց հետո կատարողական փաստաթղթերը կազմելու և աշխատանքները տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից հաստատվելու հետ կապված գործողությունները պատշաճ կերպով իրականացնելու համար:

6.7 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.8 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի ձեռքբերման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում երաշխիքի ձևով ներկայացրած ապահովման ժամկետի երկարաձգումը հավաստող փաստաթղթի առկայությամբ):

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի վավերապայմաններում Կատարողի կողմից նշված բանկային տվյալները պետք է համապատասխանեն միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով պայմանագրի և/կամ որակավորման ապահովումների և դրանց կից վճարման պահանջագրերի բանկային տվյալներին:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև

նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011037638
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ՝**
<<Վանի>> ՍՊԸ
ք. Երևան, Արին-Բերդի 2/1
<<ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 2500010873120100
ՀՎՀՀ 00412375

Տնօրեն՝

_____ Ղ. Գրիգորյան
(ստորագրություն)

Կ.Տ.

| ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՏԻՊԻ 144 ՏԵՂ ՀՁՈՐՈՒԹՅԱՄԲ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ | | | | | |
| Հ/Հ | Աշխատանքների անվանումը | Չափ. միավորը | Քանակը | Միավորի արժեքը | Ընդամենը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | **Մանկապարտեզ** | | | | |
| | **1.Շինարարական աշխատանքներ** | | | | |
| | **Հողային աշխատանքներ** | | | | |
| 1 | III կարգի գրունտի մշակում էքսկավատորով ա/ինքնաթափերի վրա բարձելով | մ3 | 128 | 750 | 96000 |
| 2 | III կարգի գրունտի մշակում էքսկավատորով կողալիցքով | մ3 | 800 | 600 | 480000 |
| 3 | III կարգի գրունտի մշակում ձեռքով | մ3 | 69.6 | 1000 | 69600 |
| 4 | IV կարգի գրունտի մշակում էքսկավատորով կողալիցքով | մ3 | 700 | 800 | 560000 |
| 5 | IV կարգի գրունտի մշակում ձեռքով | մ3 | 56 | 1200 | 67200 |
| 6 | Գրունտի ետլիցք բուլդոզերով | մ3 | 1476 | 500 | 738000 |
| 7 | Գրունտի տոփանում | մ3 | 1470 | 400 | 588000 |
| 8 | Գրունտի ետլիցք ձեռքով, տոփանումով | մ3 | 150 | 1000 | 150000 |
| 9 | Ավելորդ գրունտի տեղափոխում մինչև 7կմ | տ | 230 | 1000 | 230000 |
| | **Ե/բ կառուցվածքներ** | | | | |
| | **Հիմքեր** | | | | |
| 10 | Նախապատրաստական շերտի իրականացում բազալտե խճից տոփանումով հիմքերի տակ | մ3 | 24 | 10000 | 240000 |
| 11 | Նախապատրաստական շերտի իրականացում հիմքերի գոտու տակ B10 դասի բետոնից | մ3 | 7.5 | 65000 | 487500 |
| 12 | Նախապատրաստական շերտի իրականացում հիմքերի տակ B10 դասի բետոնից | մ3 | 24 | 70000 | 1680000 |
| 13 | Ե/բ միաձույլ առանձին կանգնած հիմքերի պատրաստում B20 դասի բետոնից, սյուների տակ | մ3 | 92 | 90000 | 8280000 |
| 14 | Ամրան Ø8Ac-I | տ | 1.006 | 500000 | 503000 |
| 15 | Ամրան Ø12A500C | տ | 2.757 | 450000 | 1240650 |
| 16 | Հիմքերի քսուկային ջրամեկուսացում բիտումով 2 շերտ | մ2 | 398 | 1500 | 597000 |
| 17 | Ե/բ միաձույլ հիմքերի գոտիների պատրաստում B20 դասի բետոնից | մ3 | 35.2 | 100000 | 3520000 |
| 18 | Ամրան Ø8Ac-I | տ | 1.567 | 500000 | 783500 |
| 19 | Ամրան Ø14A500C | տ | 2.834 | 500000 | 1417000 |
| 20 | Հիմքերի քսուկային ջրամեկուսացում բիտումով 2 շերտ | մ2 | 90 | 1500 | 135000 |
| 21 | բետոնե պատերի պատրաստում B15 դասի բետոնով /որմնախարիսխ/ | մ3 | 75 | 90000 | 6750000 |
| 22 | Որմնախարսխի քսուկային ջրամեկուսացում բիտումով 2 շերտ | մ2 | 190 | 1500 | 285000 |
| 23 | Խարսխային հեղույսների տեղադրում Ø36 ГОСТ 24379.1-80 | տ | 2.282 | 2000000 | 4564000 |
| 24 | Պնդօղակներ M36 | հատ | 544 | 800 | 435200 |
| 25 | Ամրան Ø32A500C | տ | 0.343 | 500000 | 171500 |
| 26 | Շաղախ M200 | մ3 | 1.4 | 50000 | 70000 |
| 27 | Սյուների բետոնացում B15 դասի բետոնով | մ3 | 37.4 | 85000 | 3179000 |
| 28 | Ամրանային ցանց Ø4Bp-I, քայլը 100x100մմ | մ2 | 240 | 2000 | 480000 |
| 29 | Քսուկային ջրամեկուսացում բիտումով 2 շերտ | մ2 | 217.6 | 1500 | 326400 |
| | **Ամրանավորված ե/բ հատակ** | | | | |
| 30 | Ե/բ միաձույլ հատակի պատրաստում B15 դասի բետոնից | մ3 | 108 | 85000 | 9180000 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 31 | Ամրանային ցանց Ø4Bp-I, քայլը 100x100մմ | մ2 | 1420 | 2000 | 2840000 |
| | **Մետաղակառուցվածքներ** | | | | |
| 32 | Մետաղական սյուների տեղադրում | տ | 33.97 | 200000 | 6794000 |
| 33 | Քառակուսի կտրվածքի խողովակ □300x8մմ | տ | 21.09 | 600000 | 12654000 |
| 34 | Թերթապողպատ t=10մմ | տ | 4.53 | 600000 | 2718000 |
| 35 | Թերթապողպատ t=12մմ | տ | 0.14 | 600000 | 84000 |
| 36 | Թերթապողպատ t=16մմ | տ | 0.86 | 600000 | 516000 |
| 37 | Թերթապողպատ t=20մմ | տ | 7.35 | 600000 | 4410000 |
| 38 | Մետաղակառուցվածքների պատրաստում գործարանային պայմաններում | տ | 33.97 | 200000 | 6794000 |
| 39 | Մետաղակառուցվածքների մաքրում, նախաներկում եւ ներկում հրակայուն ներկով 2 շերտ | տ | 33.97 | 30000 | 1019100 |
| 40 | Մետաղական հեծանների տեղադրում | տ | 44.302 | 200000 | 8860400 |
| 41 | Ուղղանկյուն կտրվածքի խողովակ □100x60x3մմ | տ | 12.726 | 600000 | 7635600 |
| 42 | Ուղղանկյուն կտրվածքի խողովակ □120x60x3մմ | տ | 24 | 600000 | 14400000 |
| 43 | Քառակուսի կտրվածքի խողովակ □160x4մմ | տ | 4.76 | 600000 | 2856000 |
| 44 | Անկյունակ L90x6մմ | տ | 1.21 | 600000 | 726000 |
| 45 | Անկյունակ L50x5մմ | տ | 0.373 | 600000 | 223800 |
| 46 | Թերթապողպատ t=6մմ | տ | 0.794 | 600000 | 476400 |
| 47 | Թերթապողպատ t=8մմ | տ | 0.195 | 600000 | 117000 |
| 48 | Թերթապողպատ t=20մմ | տ | 0.244 | 600000 | 146400 |
| 49 | Հեղույս M12 /պնդօղակ, տափօղակ/ | կգ | 34.2 | 3000 | 102600 |
| 50 | Հեղույս M16 /պնդօղակ, տափօղակ/ | կգ | 44.64 | 3000 | 133920 |
| 51 | Մետաղակառուցվածքների պատրաստում գործարանային պայմաններում | տ | 44.302 | 200000 | 8860400 |
| 52 | Մետաղակառուցվածքների մաքրում, նախաներկում եւ ներկում հրակայուն ներկով 2 շերտ | տ | 44.302 | 30000 | 1329060 |
| 53 | Մետաղական ֆերմաների պատրաստում և տեղադրում | տ | 16.059 | 200000 | 3211800 |
| 54 | Քառակուսի կտրվածքի խողովակ □60x3մմ | տ | 6.347 | 600000 | 3808200 |
| 55 | Ուղղանկյուն կտրվածքի խողովակ □100x60x3մմ | տ | 9.683 | 600000 | 5809800 |
| 56 | Թերթապողպատ t=8մմ | տ | 0.007 | 600000 | 4200 |
| 57 | Թերթապողպատ t=10մմ | տ | 0.022 | 600000 | 13200 |
| 58 | Հեղույս M16 /պնդօղակ, տափօղակ/ | կգ | 1.7 | 3000 | 5100 |
| 59 | Մետաղակառուցվածքների պատրաստում գործարանային պայմաններում | տ | 16.059 | 200000 | 3211800 |
| 60 | Մետաղակառուցվածքների մաքրում, նախաներկում եւ ներկում հրակայուն ներկով 2 շերտ | տ | 16.059 | 30000 | 481770 |
| 61 | Սենդվիչ պանելների ամրացման հիմնակմախքի իրականացում | տ | 6.978 | 400000 | 2791200 |
| 62 | Քառակուսի կտրվածքի խողովակ □60x3մմ | տ | 6.357 | 600000 | 3814200 |
| 63 | Անկյունակ L50x5մմ | տ | 0.224 | 600000 | 134400 |
| 64 | Թերթապողպատ t=8մմ | տ | 0.397 | 600000 | 238200 |
| 65 | Հեղույս M12 /պնդօղակ, տափօղակ/ | կգ | 101.4 | 3000 | 304200 |
| 66 | Մետաղակառուցվածքների մաքրում, նախաներկում եւ ներկում հրակայուն ներկով 2 շերտ | տ | 6.978 | 30000 | 209340 |
| | **Ընդամենը՝ շինարարական աշխատանքներ** | | | | 155037640 |
| | **2. Ճարտարապետական մաս** | | | | |
| | **Պատեր** | | | | |
| 67 | Որմնախարսխային հատվածների երեսպատում սրբատաշ բազալտե սալերով 30մմ հաստությամբ | մ2 | 110 | 20000 | 2200000 |
| 68 | Որմնախարսխային հատվածների երեսապատում 20մմ էքստրուդացված փրփրապոլիստիրոլի սալերով (37-40կգ/խմ խտության) | մ2 | 110 | 6000 | 660000 |
| 69 | Խցաբութակներ Մ8մմ, երկ.80մմ էքստրուդացված փրփրապոլիստիրոլի սալերը ամրացնելու համար | հատ | 440 | 300 | 132000 |
| 70 | Մետաղական ցանց 30x30մմ բջիջով որմնախարսխային հատվածների երեսապատման համար | մ2 | 110 | 1500 | 165000 |
| 71 | Պատերի կառուցում "Սենդվիչ" պանելներից 100մմ հաստ., լցանյութը բազալտե հանքաբամբակ 120-140 կգ/մ3 խտությամբ, թիթեղի հաստությունը ոչ պակաս քան 0.5մմ | մ2 | 630 | 30000 | 18900000 |
| 72 | Ձեւավոր էլեմենտների տեղադրում թիթեղից, 0.5մմ հաստության, սենդվիչ պանելների ամրացման համար /ըստ նախագծի/ ՁԷ-1, L=250մ, b=0.28 | մ2 | 70 | 8000 | 560000 |
| 73 | Ձեւավոր էլեմենտների տեղադրում թիթեղից, 0.5մմ հաստության, սենդվիչ պանելների ամրացման համար /ըստ նախագծի/ ՁԷ-2, L=250մ, b=0.21 | մ2 | 52.5 | 8000 | 420000 |
| 74 | Ձեւավոր էլեմենտների տեղադրում թիթեղից, 0.5մմ հաստության, սենդվիչ պանելների ամրացման համար /ըստ նախագծի/ ՁԷ-3, L=48մ, b=0.62 | մ2 | 29.8 | 8000 | 238400 |
| 75 | Ձեւավոր էլեմենտների տեղադրում թիթեղից, 0.5մմ հաստության, սենդվիչ պանելների ամրացման համար /ըստ նախագծի/ ՁԷ-4, L=13մ, b=0.052 | մ2 | 0.68 | 8000 | 5440 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 76 | Ձեւավոր էլեմենտների տեղադրում թիթեղից, 0.5մմ հաստության, սենդվիչ պանելների ամրացման համար /ըստ նախագծի/ ՁԷ-5, L=90մ, b=0.21 | մ2 | 18.9 | 8000 | 151200 |
| 77 | Ձեւավոր էլեմենտների տեղադրում թիթեղից, 0.5մմ հաստության, սենդվիչ պանելների ամրացման համար /ըստ նախագծի/ ՁԷ-6, L=90մ, b=0.126 | մ2 | 11.3 | 8000 | 90400 |
| 78 | Ձեւավոր էլեմենտների տեղադրում թիթեղից, 0.5մմ հաստության, սենդվիչ պանելների ամրացման համար /ըստ նախագծի/ ՁԷ-7, L=90մ, b=0.25 | մ2 | 22.5 | 8000 | 180000 |
| 79 | Ձեւավոր էլեմենտների տեղադրում թիթեղից, 0.5մմ հաստության, սենդվիչ պանելների ամրացման համար /ըստ նախագծի/ ՁԷ-8, L=396մ, b=0.165 | մ2 | 65.3 | 8000 | 522400 |
| 80 | Ձեւավոր էլեմենտների տեղադրում թիթեղից, 0.5մմ հաստության, սենդվիչ պանելների ամրացման համար /ըստ նախագծի/ ՁԷ-9, L=108մ, b=0.204 | մ2 | 22 | 8000 | 176000 |
| 81 | Սենդվիչ-պանելների յուղազերծում | մ2 | 630 | 500 | 315000 |
| 82 | Սենդվիչ-պանելների նախաներկում | մ2 | 630 | 1000 | 630000 |
| 83 | Սենդվիչ-պանելների բարձրորակ ներկում երկու շերտ և գեղագիտական նկարազարդում, համաձայն էքստերիերի դիզայներական նախագծի | մ2 | 630 | 4000 | 2520000 |
| 84 | Արտաքին պատերի երեսապատում հրակայուն գիպսաստվարաթղթե սալերով 12մմ /2 շերտ/, մետաղական հիմնակմախքով, ներառյալ բոլոր համալրող դետալները | մ2 | 568 | 6500 | 3692000 |
| 85 | Արտաքին պատերի երեսապատում ջրակայուն գիպսաստվարաթղթե սալերով 12մմ /2 շերտ/, մետաղական հիմնակմախքով, ներառյալ բոլոր համալրող դետալները | մ2 | 60 | 6500 | 390000 |
| 86 | Պատերի ջերմամեկուսացում կիսակոշտ բազալտե հանքաբամբակե սալերով 60-80կգ/մ3 խտությամբ), 2 շերտ 100 մմ հաստությամբ (50+50մմ) | մ2 | 628 | 8000 | 5024000 |
| 87 | Դյուբել | հատ | 942 | 150 | 141300 |
| 88 | Ճկուն ժապավեն | գմ | 753.6 | 200 | 150720 |
| 89 | Կարանների ժապավեն | գմ | 942 | 200 | 188400 |
| 90 | Ծեփամածիկ կարանների համար | կգ | 314 | 400 | 125600 |
| | **Միջնորմներ** | | | | |
| 91 | Միջնորմների իրականացում երկու կողմից երեսապատված հրակայուն գիպսաստվարաթղթե սալերով d=12մմ, 2 շերտ, մետաղական հիմնակմախքով, ներառյալ բոլոր համալրող դետալները | մ2 | 700 | 9000 | 6300000 |
| 92 | Միջնորմների իրականացում երկու կողմից երեսապատված ջրակայուն գիպսաստվարաթղթե սալերով d=12մմ, 2 շերտ, մետաղական հիմնակմախքով, ներառյալ բոլոր համալրող դետալները | մ2 | 329 | 9000 | 2961000 |
| 93 | Միջնորմների մեջ բազալտե հանքաբամբակե ձայնամեկուսիչ սալերի տեղադրում, հաստությունը՝ 50մմ, խտությունը՝ 60-80կգ/մ3 | մ2 | 1029 | 5000 | 5145000 |
| 94 | Դյուբել | հատ | 1544 | 150 | 231600 |
| 95 | Ճկուն ժապավեն | գմ | 1234.8 | 200 | 246960 |
| 96 | Կարանների ժապավեն | գմ | 1543.5 | 200 | 308700 |
| 97 | Ծեփամածիկ կարանների համար | կգ | 514.5 | 400 | 205800 |
| 98 | Սանհագույցներում միջխցիկային ալյումինե պրոֆիլից բաժանարար միջնորմների տեղադրում, լցափակումով | մ2 | 35.2 | 35000 | 1232000 |
| | **Դռներ** | | | | |
| 99 | Ալյումինե դռների տեղադրում, եռաշերտ (4+12+4+16+4) ապակեփաթետով, շրջանակը՝ ալյումինե պրոֆիլ ջերմահաղորդականությունը նվազեցնող շերտով, ներքեւի մասը ջերմամեկուսիչ շերտով սենդվիչ /ներառյալ ապակեփաթեթը, սարքերը, ներկումը/ բացվող | մ2 | 35.88 | 100000 | 3588000 |
| 100 | Ալյումինե դռների տեղադրում, եռաշերտ (4+12+4+16+4) ապակեփաթետով, շրջանակը՝ ալյումինե պրոֆիլ ջերմահաղորդականությունը նվազեցնող շերտով, ներքեւի մասը ջերմամեկուսիչ շերտով սենդվիչ /ներառյալ ապակեփաթեթը, ներկումը/ չբացվող | մ2 | 3.75 | 90000 | 337500 |
| 101 | Փայտյա հենակմախքով, ՊՎՔ երեսապատումով դռների տեղադրում /խուլ եւ ապակեպատ/ | մ2 | 107.1 | 50000 | 5355000 |
| 102 | Մետաղական դռնան տեղադրում | մ2 | 1.9 | 80000 | 152000 |
| 103 | Ալյումինե դռների տեղադրում, սանհագույցների խցիկների համար /ներառյալ ապակեփաթեթը, սարքերը, ներկումը/ | մ2 | 6.72 | 80000 | 537600 |
| | **Պատուհաններ** | | | | |
| 104 | Մետաղապլաստե, եռաշերտ (4+12+4+16+4) ապակեփաթեթով, հինգ խցիկանի պրոֆիլով պատուհանների տեղադրում /ներառյալ ապակեփաթեթը, սարքերը, ներկումը/ բացվող | մ2 | 59.4 | 60000 | 3564000 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 105 | Մետաղապլաստե, եռաշերտ (4+12+4+16+4) ապակեփաթեթով, հինգ խցիկանի պրոֆիլով պատուհանների տեղադրում /ներառյալ ապակեփաթեթը, ներկումը/ չբացվող | մ2 | 85.2 | 55000 | 4686000 |
| 106 | Ալյումինե պատուհանների տեղադրում, եռաշերտ (4+12+4+16+4) ապակեփաթետով, շրջանակը՝ ալյումինե պրոֆիլ ջերմահաղորդականությունը նվազեցնող շերտով /ներառյալ ապակեփաթեթը, սարքերը, ներկումը/ բացվող | մ2 | 18.12 | 80000 | 1449600 |
| 107 | Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում 200մմ լայնությամբ | գմ | 89 | 5000 | 445000 |
| | **Վիտրաժներ** | | | | |
| 108 | Ալյումինե վիտրաժների տեղադրում, եռաշերտ (4+12+4+16+4) ապակեփաթետով, շրջանակը՝ ալյումինե պրոֆիլ ջերմահաղորդականությունը նվազեցնող շերտով, ներքեւի մասը ջերմամեկուսիչ շերտով սենդվիչ /ներառյալ ապակեփաթեթը, ներկումը/ չբացվող | մ2 | 43.64 | 85000 | 3709400 |
| 109 | Ալյումինե վիտրաժների տեղադրում, երկշերտ (4+12+4) ապակեփաթետով, շրջանակը՝ ալյումինե պրոֆիլ ներքեւի մասը ջերմամեկուսիչ շերտով սենդվիչ /ներառյալ ապակեփաթեթը, ներկումը/ չբացվող | մ2 | 16.6 | 75000 | 1245000 |
| 110 | Թերթապողպատից տարրերի տեղադրում բացվածքների համար 80x50x3մմ | տ | 0.33 | 800000 | 264000 |
| 111 | Թերթապողպատից տարրերի տեղադրում բացվածքների համար 100x100x3մմ | տ | 0.113 | 800000 | 90400 |
| 112 | Ինքնախարսխվող հեղույս M10x120մմ | հատ | 480 | 400 | 192000 |
| | **Հատակներ** | | | | |
| 113 | Ենթաշերտի իրականացում բազալտե խճից 20-40մմ | մ3 | 251 | 10000 | 2510000 |
| 114 | Հարթեցնող նախաշերտի պատրաստում ցեմենտ-ավազային շաղախից 50մմ հաստությամբ | մ2 | 1255.1 | 3000 | 3765300 |
| 115 | Անխոնավանցիկ պոլիէթիլենային թաղանթից շերտի իրականացում | մ2 | 1255.1 | 500 | 627550 |
| 116 | Ջերմամեկուսիչ շերտի իրականացում էքստրուդացված փրփրապոլիստիրոլի սալերով 50մմ հաստությամբ | մ2 | 1255.1 | 2000 | 2510200 |
| 117 | Հարթեցնող երեսասվաղի պատրաստում ցեմենտ-ավազային շաղախից 40մմ հաստությամբ | մ2 | 304.2 | 3100 | 943020 |
| 118 | Հարթեցնող երեսասվաղի պատրաստում ցեմենտ-ավազային շաղախից 48մմ հաստությամբ | մ2 | 740.8 | 3500 | 2592800 |
| 119 | Հարթեցնող երեսասվաղի պատրաստում ցեմենտ-ավազային շաղախից 35մմ հաստությամբ | մ2 | 210.1 | 2900 | 609290 |
| 120 | Ջրամեկուսիչ շերտի իրականացում 1 շերտ իզոգամից, բիտումային մածիկի վրա | մ2 | 210.1 | 2000 | 420200 |
| 121 | Հատակի պատրաստում չսահող մամլագրանիտից, 10մմ հաստության | մ2 | 304.2 | 10000 | 3042000 |
| 122 | Վինիլային հատակի պատրաստում, 2մմ հաստությամբ, պաշտպանիչ շերտի հաստությունը՝ 0.7մմ | մ2 | 740.8 | 9800 | 7259840 |
| 123 | Հատակի պատրաստում չսահող խեցեսալերից, 10մմ հաստության | մ2 | 210.1 | 9000 | 1890900 |
| | **Տանիք** | | | | |
| 124 | Տանիքի ծածկույթի պատրաստում ԿՊ-35 ծալքավոր թիթեղից, 0.5մմ հաստության, գործարանային ներկածածկույթով, անփայլ | մ2 | 1670 | 6500 | 10855000 |
| 125 | Տաշտակաձև ջրորդանի պատրաստում, 150մմ տրամաչափի, գործարանային ներկածածկույթով թիթեղից, անփայլ | գմ | 300 | 3000 | 900000 |
| 126 | Ջրահեռացման խողովակների տեղադրում Φ120մմ, h=3.5մ, գործարանային ներկածածկույթով, անփայլ | կ-տ | 23 | 15000 | 345000 |
| 127 | Տանիքում լուսամուտների բռնակ-փակիչների տեղադրում 1 հատ և ծխնիների տեղադրում 2 զույգ | կ-տ | 5 | 5000 | 25000 |
| 128 | Լուսամուտների յուղաներկում | մ2 | 2.24 | 3500 | 7840 |
| 129 | Տանիքի պատուհանների պատրաստում ներառյալ շերտափեղկերը 750x850մմ չափերի | հատ | 5 | 50000 | 250000 |
| 130 | Տանիքի պատուհանների և շրջակա տարածքի պատում գործարանային ներկածածկույթով ցինկապատ թիթեղով 0.5մմ հաստությամբ | մ2 | 50 | 7000 | 350000 |
| 131 | Հոսանոցների պատրաստում գործարանային ներկածածկույթով ցինկապատ թիթեղից 0.5մմ հաստությամբ | մ2 | 62 | 7000 | 434000 |
| 132 | Տանիքի պիպի իրականացում գործարանային ներկածածկույթով ցինկապատ թիթեղից 0.5մմ հաստությամբ /L=240մ/ | մ2 | 96 | 7000 | 672000 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 133 | Քիվի կախվածքի տակի երեսապատում գործարանային ներկածածկույթով ձևավոր ծակոտկեն ցինկապատ թիթեղյա սալերով 0.5մմ հաստությամբ | մ2 | 210 | 7000 | 1470000 |
| 134 | Ձնարգելիչների տեղադրում | գմ | 230 | 4000 | 920000 |
| | **Ներքին հարդարում** | | | | |
| 135 | Կախովի առաստաղի պատրաստում հրակայուն գիպսաստոարաթղթե սալերից 9մմ հաստության, մետաղական հիմնակմախքով | մ2 | 1078.3 | 6000 | 6469800 |
| 136 | Կախովի առաստաղի պատրաստում ջրակայուն գիպսաստոարաթղթե սալերից 9մմ հաստության, մետաղական հիմնակմախքով | մ2 | 176 | 6000 | 1056000 |
| 137 | Գոլորշամեկուսիչ թաղանթ կախովի առաստաղի վրա | մ2 | 1254.3 | 800 | 1003440 |
| 138 | Ջերմամեկուսիչ բազալտե հանքաբամբակից 200մմ (4x50մմ շերտերով, 35կգ/մ3), կախովի առաստաղի հենակմախքի վրա | մ2 | 1254.3 | 11000 | 13797300 |
| 139 | ՑԹՍ սալերի կավարամածի պատրաստում 50x50մմ փայտե չորսուներից, մշակում հականեխիչ և հակահրդեհային մածիկով 2 շերտ | մ2 | 1254.3 | 500 | 627150 |
| 140 | 50x50մմ փայտե չորսուների արժեքը Լընդ. = 2700 գծմ | մ2 | 6.75 | 180000 | 1215000 |
| 141 | ՑԹՍ (ցեմենտա-թեփային սալ) 15մմ սալից ծածկույթի իրականացում 3.30 մ նիշի վրա | մ2 | 1254.3 | 6000 | 7525800 |
| 142 | Պատերի սվաղում ցեմենտ-ավազային շաղախով բարելավված որակի | մ2 | 255.6 | 3500 | 894600 |
| 143 | Պատերի երեսպատում հախճասալով | մ2 | 255.6 | 10000 | 2556000 |
| 144 | Պատերի ներկում լատեքսային ներկով, բարելավված որակի, ծեփամածկումով | մ2 | 2313.1 | 3000 | 6939300 |
| 145 | Առաստաղի ներկում ջրաէմուլսիոն ներկով, բարելավված որակի, ծեփամածկումով | մ2 | 1254.3 | 3500 | 4390050 |
| | **Արտաքին աստիճաններ** | | | | |
| 146 | Խամքարաբետոնե զանգվածի պատրաստում B7.5 դասի բետոնով | մ3 | 34.6 | 60000 | 2076000 |
| 147 | Նախապատրաստական շերտի իրականացում B10 դասի բետոնից | մ3 | 9 | 50000 | 450000 |
| 148 | Արտաքին աստիճանների,հարթակների եւ թեքահարթակների երեսապատում 30մմ հաստության բազալտե սալերով | մ2 | 104 | 20000 | 2080000 |
| 149 | Աստիճանների բազրիքի պատրաստում | տ | 0.831 | 200000 | 166200 |
| 150 | Խողովակ Ø50x3.5մմ | կգ | 342 | 600 | 205200 |
| 151 | Խողովակ Ø32x3.2մմ | կգ | 136 | 600 | 81600 |
| 152 | Ուղղանկյուն կտրվածքի խողովակ □30x20x2մմ | կգ | 184 | 600 | 110400 |
| 153 | Խողովակ Ø20x1.5մմ | կգ | 169 | 600 | 101400 |
| 154 | Բազրիքի յուղաներկում 2 շերտ | մ2 | 44.33 | 3500 | 155155 |
| | **Տարբեր աշխատանքներ** | | | | |
| 155 | Հաշմանդամների սանհանգույցի բռնակների տեղադրում | հատ | 4 | 15000 | 60000 |
| 156 | Հաշմանդամների սանհանգույցի ծալովի բռնակների տեղադրում | հատ | 4 | 20000 | 80000 |
| | **Ընդամենը՝ ճարտարապետական մաս** | | | | 174264755 |
| | **3.Ջեռուցում** | | | | |
| 157 | Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B7.5 դասի բետոնից, ընդգետնյա առվակի տակ | մ3 | 24.85 | 60000 | 1491000 |
| 158 | Ընդգետնյա առվակի իրականացում ե/բ հավաքովի վաքերից /Лу4-8-1, Л4г-8/ | մ3 | 29.9 | 200000 | 5980000 |
| 159 | Ընդգետնյա առվակի ե/բ միաձույլ հիմքի պատրաստում B12.5 դասի բետոնից | մ3 | 0.9 | 65000 | 58500 |
| 160 | Ամրանային ցանց Bp 100x100x3մմ | տ | 0.015 | 800000.0 | 12000 |
| 161 | Ընդգետնյա առվակի ե/բ միաձույլ պատերի պատրաստում B12.5 դասի բետոնից | մ3 | 2.03 | 80000 | 162400 |
| 162 | Ամրանային ցանց Bp 100x100x3մմ | տ | 0.033 | 800000 | 26400 |
| 163 | Ե/բ հավաքովի ծածկի սալերի տեղադրում վաքերի վրա П5д-8, L=0.74մ, այդ թվում 5 հատ շարժական | հատ | 313 | 9000 | 2817000 |
| 164 | Ե/բ հավաքովի ծածկի սալերի տեղադրում վաքերի վրա П5д-8*, L=0.28-0.68մ | հատ | 22 | 8000 | 176000 |
| 165 | Առվակի ցանցավոր մետաղական կափարիչների տեղադրում /60x78սմ/, 2 հատ | տ | 0.016 | 1000000 | 16000 |
| 166 | Առվակի ծածկի սալերի տակ անկյունակների տեղադրում L63x63x5մմ, L=22մ | տ | 0.106 | 1000000 | 106000 |
| 167 | Խողովակների տակ հենարանային բարձիկների տեղադրում /ОП-1/ | հատ | 250 | 500 | 125000 |
| 168 | Ենդգետնյա կոնվեկտորի ե/բ փոսորակի իրականացում 1.75x0.3x0.25(Н)մ, B12.5 դասի բետոնից | մ3 | 0.42 | 100000 | 42000 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 169 | Ամրանային ցանց Bp 100x100x3մմ | տ | 0.007 | 800000 | 5600 |
| 170 | Փոսորակի եզրի մետաղական անկյունակների տեղադրում անկյունակների տեղադրում L36x36x3մմ | տ | 0.015 | 1000000 | 15000 |
| 171 | Առվակի մետաղական մասերի ներկում հակակոռոզիոն ներկով 2 շերտ | տ | 0.13 | 30000 | 3900 |
| 172 | Առվակի արտաքին մակերեսի մեկուսացում բիտումով /աշխատավարձը հաշի է առնված վաքերի տեղադրումում/ | մ2 | 500 | 1000 | 500000 |
| 173 | Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից Ø15 (20x1.9), PN10, հիդրավլիկ փորձարկումով | գմ | 88 | 800 | 70400 |
| 174 | Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից Ø20 (25x2.3), PN10, հիդրավլիկ փորձարկումով | գմ | 42 | 1000 | 42000 |
| 175 | Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից Ø25 (32x3.0), PN10, հիդրավլիկ փորձարկումով | գմ | 92 | 1500 | 138000 |
| 176 | Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից Ø32 (40x3.7), PN10, հիդրավլիկ փորձարկումով | գմ | 115 | 2000 | 230000 |
| 177 | Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից Ø40 (50x4.6), PN10, հիդրավլիկ փորձարկումով | գմ | 145 | 2500 | 362500 |
| 178 | Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից Ø50 (63x5.8), PN10, հիդրավլիկ փորձարկումով | գմ | 135 | 3500 | 472500 |
| 179 | Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից Ø15 (20x1.9), PN10, հիդրավլիկ փորձարկումով | գմ | 115 | 800 | 92000 |
| 180 | Պոլիպրոպիլենային խողովակների անկյունակներ Ø20մմ | հատ | 180 | 100 | 18000 |
| 181 | Պոլիպրոպիլենային խողովակների եռաբաշխիչներ խցւոկով Ø20մմ | հատ | 170 | 150 | 25500 |
| 182 | Խողովակների անցումներ մետաղ/պլաստմասսա Ø20մմ | հատ | 300 | 800 | 240000 |
| 183 | Ջեռուցման ալյումինե մարտկոցների տեղադրում | էքմ | 153.7 | 2000 | 307400 |
| 184 | Ջեռուցման ալյումինե մարտկոցների արժեքը H=500մմ, W=97վտ /եւրոպական/ | սեկ-ցիա | 530 | 5000 | 2650000 |
| 185 | Ենդգետնյա կոնվեկտոր KC250,303,2250 Q=2285վտ | հատ | 2 | 550000 | 1100000 |
| 186 | Ջերմակարգավորիչ փականներ Ø15մմ | հատ | 89 | 2500 | 222500 |
| 187 | Կցորդչային փականներ Ø15մմ | հատ | 176 | 1500 | 264000 |
| 188 | Ավտոմատ օդահեռացման փականներ Ø15մմ | հատ | 89 | 2000 | 178000 |
| 189 | Պողպատե խողովկների ներկում հակակոռոզիոն ներկով 2 շերտ | մ2 | 65 | 2000 | 130000 |
| 190 | Խողովակների ջերմամեկուսացում ռետինե ջերմամեկուսիչներով, b=1սմ /հատակի մեջ/ | գմ | 9 | 1000 | 9000 |
| 191 | Խողովակների ջերմամեկուսացում ֆոլգայապատ ապակեբամբակով, b=4սմ | մ3 | 6.5 | 30000 | 195000 |
| 192 | Փայլաթիթեղի տեղադրում մարտկոցներ ետեւում, պատերի վրա | մ2 | 37 | 3000 | 111000 |
| 193 | Մետաղական պարկուճների տեղադրում պողպատե խողովակներից Ø273x7մմ, 4 հատ | գմ | 5 | 30000 | 150000 |
| 194 | Պարկուճների ուժեղացված հակակոռոզիոն մեկուսացում Ø273x7մմ | գմ | 5 | 2500 | 12500 |
| 195 | Պարկուճների եւ խրամուղու միացման հանգույցներ էլաստիկ նյութով, b=15սմ | մ2 | 0.7 | 10000 | 7000 |
| 196 | Ավազի նախապատրաստական շերտի իրականացում պարկուճների տակ, 10սմ հաստությամբ | մ3 | 0.13 | 10000 | 1300 |
| | **Ընդամենը՝ ջեռուցում** | | | | 18565400 |
| | **4.Օդափոխություն** | | | | |
| | **ա - ԱՀ-1; ԱՀ-3; ԱՀ-5** | | | | |
| 197 | Կանալային օդափոխիչ ECF(K) 4E 225 T160-CO Q=250մ3/ժ, N=0.095կվտ, n=2500պտ/րոպ, G=3.8կգ, D=332մմ, L=230մմ կամ համարժեք | հատ | 3 | 200000 | 600000 |
| 198 | Հակահրդեհային կրակապաշտպան կափույր ВЕНТС ПЛ-10-1А ДН160, D=172, L=170մմ, G=1.6կգ | հատ | 3 | 50000 | 150000 |
| 199 | Ձտիչ ФБ տիպի ФБ160 220x202մմ, L=106մմ, G=1.26կգ | հատ | 3 | 30000 | 90000 |
| 200 | Սահափակիչ АЗД-160м-РП,ռետինից կիպարարով L=170մմ | հատ | 3 | 32000 | 96000 |
| 201 | Օդատարի անցկացում ցինկապատ պողպատից կլոր կտրվածքով d=0.5մմ, Ø160մմ | մ2 | 16.2 | 8000 | 129600 |
| 202 | Օդատարների ճկուն միացումներ Ø160/330մմ | հատ | 6 | 11000 | 66000 |
| 203 | Օդատարների ճկուն միացումներ Ø160/170մմ | հատ | 6 | 6000 | 36000 |
| 204 | Օդատարների ճկուն միացումներ Ø160մմ | հատ | 12 | 5000 | 60000 |
| 205 | Օդատարների կարգավորվող ցանցաշարեր РЭД-КР-Ø160, F=0.02մ2 | հատ | 9 | 5000 | 45000 |
| 206 | Օդատարների ամրացման մետաղական սարքեր | կգ | 36 | 2000 | 72000 |
| 207 | Օդատարների մեկուսացում թիթեղապատ հանքաբամբակով d=50մմ | մ3 | 1.1 | 50000 | 55000 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 208 | Մետաղական թասակ ցինկապատ թիթեղից 300մմ, d=0.55մմ, G=0.93կգ | հատ | 3 | 12000 | 36000 |
| | **բ - ԱՅ-2; ԱՅ-4; ԱՅ-6** | | | | |
| 209 | Կանալային օդափոխիչ ECF(K) 4E 225 T160-CO Q=250մ3/ժ, N=0.095կվտ, n=2500պտ/րոպ, G=3.8կգ, D=332մմ, L=230մմ կամ համարժեք | հատ | 3 | 200000 | 600000 |
| 210 | Հակահրդեհային կրակապաշտպան կափույր ВЕНТС ПЛ-10-1А ДН160, D=172, L=170մմ, G=1.6կգ | հատ | 3 | 50000 | 150000 |
| 211 | Ձտիչ ՓԲ տիպի ՓԲ160 220x202մմ, L=206մմ, G=1.26կգ | հատ | 3 | 30000 | 90000 |
| 212 | Սահափակիչ АЗД-160м-РП,ռետինից կիպարարով L=170մմ | հատ | 3 | 32000 | 96000 |
| 213 | Օդատարի անցկացում ցինկապատ պողպատից կլոր կտրվածքով d=0.5մմ, Ø160մմ | մ2 | 16.2 | 8000 | 129600 |
| 214 | Օդատարների ճկուն միացումներ Ø160/330մմ | հատ | 6 | 11000 | 66000 |
| 215 | Օդատարների ճկուն միացումներ Ø160/170մմ | հատ | 6 | 6000 | 36000 |
| 216 | Օդատարների ճկուն միացումներ Ø160մմ | հատ | 12 | 5000 | 60000 |
| 217 | Օդատարների կարգավորվող ցանցաշարեր РЭД-КР-Ø160, F=0.02մ2 | հատ | 9 | 5000 | 45000 |
| 218 | Օդատարների ամրացման մետաղական սարքեր | կգ | 36 | 2000 | 72000 |
| 219 | Օդատարների մեկուսացում թիթեղապատ հանքաբամբակով d=50մմ | մ3 | 1.1 | 50000 | 55000 |
| 220 | Մետաղական թասակ ցինկապատ թիթեղից 300մմ, d=0.55մմ, G=0.93կգ | հատ | 3 | 12000 | 36000 |
| | **գ - ԱՅ-7** | | | | |
| 221 | Կանալային օդափոխիչ ECF(K) 4E 220 T160-CO Q=320մ3/ժ, N=0.085կվտ, n=2600պտ/րոպ, G=3.75կգ, D=160մմ, L=232մմ կամ համարժեք կամ համարժեք | հատ | 1 | 200000 | 200000 |
| 222 | Հակահրդեհային կրակապաշտպան կափույր ВЕНТС ПЛ-10-1А ДН200, D=212, L=170մմ, G=2կգ | հատ | 1 | 60000 | 60000 |
| 223 | Աղմկախլացուցիչ ВЕНТС СР 220/600 L=600մմ, D=315մմ, G=4.6կգ | հատ | 1 | 50000 | 50000 |
| 224 | Ձտիչ ՓԲ տիպի ՓԲ200 244x245մմ, L=206մմ, G=1.55կգ | հատ | 1 | 35000 | 35000 |
| 225 | Սահափակիչ АЗД-200м-РП,ռետինից կիպարարով L=170մմ | հատ | 1 | 32000 | 32000 |
| 226 | Օդատարի անցկացում ցինկապատ պողպատից կլոր կտրվածքով d=0.5մմ, Ø160մմ | մ2 | 0.8 | 8000 | 6400 |
| 227 | Օդատարի անցկացում ցինկապատ պողպատից կլոր կտրվածքով d=0.5մմ, Ø200մմ | մ2 | 5 | 8000 | 40000 |
| 228 | Օդատարների ճկուն միացումներ Ø160/318մմ | հատ | 2 | 10000 | 20000 |
| 229 | Օդատարների ճկուն միացումներ Ø160/240մմ | հատ | 2 | 8000 | 16000 |
| 230 | Օդատարների ճկուն միացումներ Ø160/212մմ | հատ | 2 | 7000 | 14000 |
